ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՐԺԱՆԱՑԵԼ Է ՄՐՑԱՆԱԿԻ

09.12.2014 18:27

ՀՀ փաստաբանների պալատը այսօր՝ դեկտեմբերի 9-ին, հակակոռուպցիոն միջազգային օրվա կապակցությամբ արժանացել է ‘Տարվա քաղաքացիական հասարակության կազմակերպություն’ մրցանակի, որը սահմանվել է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի և քաղաքացիական հասարակության ինստիտուտների հակակոռուպցիոն կոալիցիայի կողմից: Միջոցառման կազմակերպիչները՝ Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան, Ինֆորմացիայի ազատության կենտրոնը, մրցանակը սահմանել են փաստաբանների իրավունքների պաշտպանության հարցում սկզբունքային դիրքորոշում և գործելակերպ ցուցաբերելու համար:

Մրցանակը ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանին է հանձնել Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի ղեկավար Կարեն Զադոյանը:

Շնորհակալություն հայտնելով կազմակերպիչներին Պալատի աշխատանքը գնահատելու համար՝ Պալատի նախագահ Արա Զոհրաբյանը հայտնել է, որ,- ‘Փաստաբանների պալատը, իրոք, հակակոռուպցիոն մարտավարություն է իրականացնում, մենք ոչ միայն փաստաբանների հետ աշխատանքներում ենք այդ կոչերն անում, այլ նաև փաստաբանների դպրոցում ունկնդիրների սովորելու ընթացքում ենք փորձում դա ներդնել նրանց գիտակցության մեջ»:

Մրցանակները սահմանված էին 3 անվանակարգերում՝ տարվա քաղաքացի, լրագրող և քաղաքացիական հասարակության կազմակերպություն: Խախտված իրավունքների պաշտպանության հարցում սկզբունքային դիրքորոշում և գործելակերպ ցուցաբերելու համար տարվա քաղաքացի մրցանակին է արժանացել Հրաչյա Ավետիսյանը, տարվա լրագրող անվանակարգում մրցանակը հանձնվել է ‘Արմնյուզ’ հեռուստաընկերության ‘ռևիզոր’ նախագծի թիմին:

Միջոցառման ընթացքում ներկայացվել են հակակոռուպցիոն տեսաֆիլմեր, որոնք առնչվել են մրցանակակիրների հակակոռուպցիոն գործունեությանը:

Նշենք, որ ծրագիրը ֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })